ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

22 մարտի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

40
(2890)

100 դրամ

Ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱԺ ՆԱԽԱԳԱՀԻ ԿԻՆԸ 2019Թ.-ԻՆ ՆՈՐ ԲԻԶՆԵՍ Է ՀԻՄՆԵԼ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի կինը՝ Մարիամ Մարգարյանը, բացի լրատվամիջոց ղեկավարելուց, նաեւ ունի սեփական բիզնեսը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ԱԺ նախագահի կինն իր սեփական կազմակերպությունն է հիմնել, որը համագործակցում է հայկական էստրադայի տարբեր ներկայացուցիչների հետ ու համերգներ կազմակերպում: Կազմակերպությունը, որի իրական շահառուն հենց ԱԺ նախագահի կինն է, կոչվում է «ԷՖԷՄԷՖ գրուպ»: Այն հիմնադրվել է 2019թ.-ին, ՍՊԸ-ն գրանցված է Երեւանի Կենտրոն վարչական շրջանում՝ Արամի փողոց, 72 շենք, 21 բնակարան հասցեում: Թեեւ Ալեն Սիմոնյանի կնոջ ՍՊԸ-ի գրանցման հասցեն նշված է Արամի փողոց, բայց, մեր տեղեկություններով, Մարիամ Մարգարյանն իր ղեկավարած «Ֆրինյուզ» հեռուստաընկերության՝ Հերացի փողոցի վրա գտնվող գրասենյակին հարակից տարածքում է «ԷՖԷՄԷՖ գրուպ»-ի գործունեությունը ծավալում: Ինչպես կազմակերպության գործունեությունն ուսումնասիրելիս պարզ է դառնում, այն տարբեր միջոցառումների, համերգային ծրագրերի կազմակերպմամբ է զբաղվում: Մարիամ Մարգարյանի ներկայացրած հայտարարագրից տեղեկանում ենք նաեւ, որ «ԷՖԷՄԷՖ գրուպ»-ում աշխատանքից նա մոտ 8 մլն դրամ շահույթ է ստանում տարեկան: Տեղեկության վերաբերյալ մեկնաբանություն ստանալու համար դիմեցինք նաեւ Մարիամ Մարգարյանին. վերջինս ասաց. «Համատեղությամբ աշխատանք է, այո՛: «ԷՖԷՄԷՖ»-ը ակտիվ գործունեություն չի ծավալում, շատ ժամանակ չի խլում»: «Ժողովուրդ» օրաթերթը ավելի վաղ գրել էր նաեւ, որ ԱԺ նախագահի կնոջ տնօրինությամբ եւ քավոր Էդգար Ավագյանի ֆինանսավորմամբ գործող «Ֆրինյուզ»-ը, օգտվելով պետության, կառավարության բարեհաճությունից, ամիսներ շարունակ չի վճարել Հայաստանի հեռուստատեսության եւ ռադիոհաղորդիչ ցանցին ամսական 1.5 մլն դրամ վճարը: «Ֆրինյուզ» ընկերության պարտքը կազմել էր 23,3 մլն ՀՀ դրամ, որը ավելի ուշ մարվեց՝ «Ժողովուրդ» օրաթերթի բացահայտումներից բարձրացած աղմուկի ֆոնին:

Երեկ, կառավարության որոշմամբ, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ նշանակվեց Եղիազար Վարդանյանը: ArmLur.am-ը գրել էր, որ Եղիազար Վարդանյանը Ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտորն էր եւ այդ պաշտոնը լքել է Նիկոլ Փաշինյանի առաջարկով: Հիշեցնենք, որ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի պաշտոնը թափուր էր հունվարի 4-ից. հունվարի 3-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն այցելել էր Լոռու մարզի Հագվի բնակավայրի նորակառույց մոդուլային դպրոց, որտեղ հանդերձարանի կախիչը պոկեց, դժգոհեց, Քաղշին նախագահ Արմեն Ղուլարյանն էլ կռացավ, վերցրեց կախիչը, այնուհետեւ ազատվեց պաշտոնից: Եղիազար Վարդանյանի նշանակումը պատահական չէր. նա մինչ ռեկտոր լինելը լուրջ քաղաքաշինական գործունեությամբ է զբաղվել: Մասնավորապես, նախկինում Վարդանյանը ունեցել է շինարարական ընկերություն եւ մասնակցել է յուղալի մրցույթների: Վարդանյանը վայելում է ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի հովանավորչությունը: Հավելենք, որ արդեն նախկին ռեկտոր Եղիազար Վարդանյանը միջամտություն ունի նաեւ Ակադեմիական քաղաքի՝ կյանքի կոչման գործին: Դեռ փետրվար ամսին կառավարությունում խորհրդակցություն է տեղի ունեցել, որին, որպես ռեկտոր, մասնակցել է Վարդանյանը եւ Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագիծը նախագծող ցշբ International GmbH Architects and Engineers ընկերության գործադիր տնօրեն Ստեֆան Շուտցը: Վարդանյանն այս հանդիպման ընթացքում նշել է. «Կարող ենք արդեն ճշգրտությամբ ասել, թե որքան ջուր, ոռոգում, գազ, էլեկտրաէներգիա է պահանջվում: Արդեն կարող ենք այս ուղղությամբ աշխատանքներ իրականացնել»: Վերջում հավելենք, որ Նիկոլ Փաշինյանը, ըստ էության, անճարությունից է այս ընտրությունը կատարել՝ 3 ամիս անց համալսարանի ռեկտորին տեղափոխելով իր ենթակայության տակ գտնվող գերատեսչություն: Մնում է տարակուսել՝ արդյոք Վարդանյանը կարդարացնի Փաշինյանի հույսերը:

ՔՊ-ականները մտադիր են ինտենսիվ հանդիպումներ սկսել Արցախից բռնի տեղահանված քաղաքացիների հետ, մեղմել նրանց զայրույթը: Ինչպես հայտնի է, երեկ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները խորհրդարանում փակ հանդիպում են ունեցել փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի հետ: Հանդիպմանը ներկա են եղել նաեւ ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանը, աշխատանքի եւ սոցիալական հարցերի փոխնախարարներ Աննա Ժամկոչյանը եւ Դավիթ Խաչատրյանը, Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության պետ Արմեն Ղազարյանը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հանդիպման ժամանակ ՔՊ-ականներին փոխանցվել է Նիկոլ Փաշինյանի հերթական հրահանգը, այն է՝ պարբերաբար փակ հանդիպումներ անցկացնել բռնի տեղահանված արցախցիների հետ, զրուցել նրանց հետ: Այսպիսով, ՔՊ-ականները Երեւանի տարբեր վարչական շրջաններում, ինչպես նաեւ մարզերում ինտենսիվորեն հանդիպումներ կունենան բռնի տեղահանված արցախցիների հետ: Թե իրենց իշխանության օրոք իրենց տներից ու սեփականություններից զրկված արցախցիների հետ ինչ պետք է խոսեն ՔՊ-ականները, դժվար է ասել: Հրահանգը, սակայն, կա եւ պիտի իրագործվի:

Բարձրագույն դատական խորհուրդը դատարանների նախագահներին մի նոր փաստի առաջ է կանգնեցրել: Մասնավորապես, «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ ԲԴԽ-ն որոշել է՝ այսուհետ դատավորները պետք է իրենց գործերի ժամկետների մասին տեղյակ պահեն դատարանի նախագահին, եթե ժամանակին չեն ավարտել գործը, ներկայացնեն պարզաբանում, թե ինչու չի հաջողվել: Ամենաուշագրավը ԲԴԽ որոշման մեջ այն է, որ եթե դատարանի նախագահն էլ չպահպանի դատարանի դատավորների կողմից գործերի ժամկետների հսկողության մասով հետեւողական մոտեցում ու ժամանակին դեպարտամենտին տեղյակ չպահի, ապա ողջ պատասխանատվությունը ընկնում է իր վրա: Ասել է թե՝ դատարանների նախագահները պետք է սկսեն դատավորների վարույթներում քննվող գործերի ընթացքի մասին մանրամասներին տիրապետել եւ ապա զեկուցել ԲԴԽ-ին: Բացի այդ, սահմանել են, որ դատավորները, որոնք իրենց խնամակալության տակ ունեն մանկահասակ երեխա (ներ) եւ (կամ) առողջական խնդիրներ ունեցող անձ(ինք) եւ այլն, դատարանի նախագահին նախապես ու ամսվա վերջում գրավոր հաշվետվություններ պետք է տան (ինչը նույնիսկ ոստիկանությունում ու քննչական մարմիններում չկա): Դատավորները կարող են բացակայել աշխատանքի վայրից օրվա ընթացքում առավելագույնը մեկ ժամ: Ընտանեկան դրության մանրամասները դատարանների նախագահներին զեկուցելուց բացի, պետք է իրենց վարույթի գործերի մանրամասները ներկայացնեն, որ նրանք վերհսկեն ընթացքը: Այսկերպ «անկախ դատական համակարգի» բրգաձեւ ղեկավարման նոր մոդել է ներդրվում սիրուն փաթեթավորմամբ՝ վարքագծի նկատմամբ հսկողությունից անցնելով ընթացիկ գործերի մոնիթորինգին: Այս քայլով ԲԴԽ-ն, որ սահմանադրական անկախ մարմին է՝ ապահովելու դատական անկախ համակարգի գործունեությունը, իրականացնելու է տոտալ հսկողություն՝ համակարգը արդեն դե յուրե դարձնելով միասնական կառավարման ենթակա կառույց, շեֆ-ենթակա հարաբերություն կառուցելով:

ԶՐՈՒՅՑ

«ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԵՏ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԻ»

ArmLur.am-ի զրուցակիցն է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վահե Ղալումյանը, որը ծնունդով Տավուշի մարզից է:

-Պարոն Ղալումյան, Նիկոլ Փաշինյանը Տավուշի գյուղերի հանձնման խոսակցությունների ֆոնին օրեր առաջ գնացել էր մարզ, հանդիպել տեղի բնակիչների հետ ու, ըստ էության, հաստատել, որ նոր զիջումներ են սպասվում: Ինչպես բնակիչներն էին պատմել, հանդիպման ժամանակ Նիկոլ Փաշինայնն ասել է՝ եթե Ադրբեջանի պահանջած գյուղերի չհանձնենք, նոր պատերազմ է սկսվելու:

-Վարչապետը նման բան չի ասել. խոսքը Ադրբեջանի պահանջած այն գյուղերի մասին է, որտեղ նախկինում ադրբեջանական բնակչություն է ապրել: Հիմա այդ տարածքներում ո՛չ մի տուն, ո՛չ մի բնակիչ չկա. դա Հայաստանի 29.800ք/կմ տարածքի հետ կապ չունի: Եթե դեռ սահմանազատում, սահմանագծում չի արվել, չկա իրավական քարտեզ, որով սահմանները հստակեցվեն, ինչպե՞ս եք որոշում, որ այդ գյուղերը ադրբեջանական տարածքում են:

Եթե այս խոսույթը, այս քննարկումը մինչեւ սահմանազատման ու սահմանագծման հարցերով զբաղվող հանձնաժողովի որոշումներից առաջ ենք սկսում, իհարկե, միանշանակ չենք կարող ասել՝ ինչն ինչպես է, բայց կան բաներ, որոնք նախապես տեսանելի են:

-Ի՞նչն է օրինակ տեսանելի:

-Ինձ համար, օրինակ, որ Գուգլ քարտեզը բացում ես, Հայաստանի սահմաններ որտեղ որ նշված են, դրանից դուրսի մասին է խոսքը, բայց ես գտնում եմ, որ եւ՛ մենք, եւ՛ դուք՝ լրատվամիջոցները, պետք է այս հարցին շատ նուրբ մոտենաք ու մինչեւ սահմանազատման, սահմանագծման հանձնաժողովի՝ որոշումներ կայացնելը ոչ մի հրապարակային քննարկում չսկսեք:

-Պարոն Ղալումյան, բայց այս քննարկումն առաջինը վարչապետն ու իշխանության ներկայացուցիչներն են սկսել՝ ասելով, որ Տավուշից պետք է սահմանազատման աշխատանքները սկսեն:

-Վարչապետը եւ իշխանության ներկայացուցիչները այն, ինչ ասել են, դա տեսանելի է, դրա շրջանակում պետք է գործընթացները լինեն: Ես միշտ՝ այդ գյուղերի մասին շեշտելիս, նաեւ նշում եմ, որ կան ՀՀ 29.800 ք/կմ-ի մեջ մտնող տարածքներ, որոնք գտնվում են Ադրբեջանի վերահսկողության ներքո. հիմա, այդ հարցը թողած, կենտրոնանում եք այն տարածքների վրա, որոնք Հայաստանի 29.8000ք/կ տարածքից դուրս են, բայց ոչ որոշակի առումով, հնարավոր է, Հայաստանի վերահսկողության տակ լինեն: Ես գտնում եմ, որ մինչեւ սահմանագծման ու սահմանազատման հանձնաժողովի որոշումները այս հարցի քննարկումը լեգիտիմ չէ:

-Որո՞նք են Ձեր նշած այդ գյուղերը, որոնք ադրբեջանական են:

-Այդ գյուղերը հարաբերական են, որովհետեւ դրանց անուններն էլ է խառը: Կա Ոսկեպար, Վերին Ոսկեպար. այդ գյուղերը խաչվում են ու հանրության կողմից այս ձեւ են ընկալվում: Սա շատ նուրբ հարց է:

-Պարոն Ղալումյան, Դուք ծնունդով Տավուշից եք: Երբ լսում եք, որ ԱԺ ամբիոնից Նիկոլ Փաշինյանը, ձեր թիմակիցները, նաեւ Դուք հայտարարում եք, որ Տավուշում գյուղեր կան, մերը չեն, ադրբեջանական են, ինչպե՞ս եք, որպես տավուշցի, վերաբերվում այս հայտարարություններին:

-Դրանց ես վերաբերվում եմ այնպես, ինչպես նախկինում: Ես առաջիններից մեկն եմ ասել, որ այս գյուղերը Տավուշի վարչատարածքային բաժանման մեջ գոյություն չունեցող գյուղեր են, սրանք ընդգրկված չեն Տավուշի մարզում որպես վարչատարածքային միավորներ, դրանք ՀՀ 29.800 ք/կմ տարածքից դուրս են:

-Պարոն Ղալումյան, պատերացնո՞ւմ եք, որ օրերից մի օր Ադրբեջանի նախագահը կամ նրանց պատգամավորները նման բան ասեն, թե այս կամ այն գյուղը ադրբեջանական չէ, պատմական Հայաստանի տարածքում է: Միայն մեր իշխանությունների կողմից են նման հայտարարություններ հնչում:

-Վարչապետը նման բան չի ասել, նա ասել է՝ այն գյուղերը, որոնց մասին Ադրբեջանը խոսում է, Տավուշի մարզում նման գյուղեր չկան. Տավուշի մարզն ունի 4 խոշորացված համայնք, եւ վարչական միավորների մեջ նման անուններ գոյություն չունեն:

-Իսկ արդյոք նման հայտարարություններով Հայաստանի իշխանությունները հիմք չե՞ն տալիս, որ Ադրբեջանը նոր պահանջներ մեզ ներկայացնի:

-Վարչապետն այդ գյուղերի բնակիչների հետ հանդիպելիս ասել է, որ Ադրբեջանի հետ որեւէ պայմանավորվածություն գոյություն չունի, մենք ընդամենը մեր մեջ խոսում ենք. թե հետո ինչ պահանջներ կլինեն, ինչպես կդիմակայենք, ինչ կլինի, դա հետագայի խնդիր է: Այսօր անկլավների մասին խոսք չկա, խոսքն այն վարչատարածքային միավորների մասին է, որոնք նախկինում եղել են ադրբեջանական բնակավայրեր:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՍԵՎԱՆԸ՝ ԴԵՌԵՎՍ «ՉԱՓԱՌՆԵՐՈՎ»

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է

Գեղարքունիքի մարզում ունեցած նախընտրական ելույթի ժամանակ՝ 2018 թվականի նոյեմբերի 29-ին, Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Սեւանա լիճն ունի բազմաթիվ պրոբլեմներ: Երբ վարչապետ ընտրվեցի, տեղեկացա, որ «Սեւան» ազգային պարկի տարածքները ինչ-որ պաշտոնյաների բաժան-բաժան են արված, ծիծաղելի գումարներով վարձակալության են տրված: Իմ առաջին հանձնարարականներից մեկն այն էր, որ տրամաբանական վարձավճարներ սահմանվեն: Սեւանա լիճը պետք է դարձնել բարձրակարգ տուրիստական գոտի:

Առաջին պայմաններից մեկը Սեւանը այդ ցանցային ցանկապատերից ազատելն է: Մեկ էլ գնում ես, ափով քայլում ես, տեսնում ես՝ չափառ է դրված»: Իրականությունը, սակայն, ինչպես միշտ, այլ է: «Ժողովուրդ» օրաթերթի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Սեւանն այդպես էլ բարձրակարգ տուրիստական գոտի չի դարձել Նիկոլ Փաշինյանի հայտարարություններից ավելի քան 5 տարի անց: Սեւանի ափերին դեռեւս շատ են ցանկապատված, Նիկոլ Փաշինյանի հայտարարության համաձայն, «բաժան-բաժան» արված տարածքները: 2022թ. հուլիսին մամուլը հրապարակեց լուսանկարներ, որ Սեւանի ափին՝ Շորժա տանող ճանապարհին, շքեղ առանձնատուն է կառուցվում: Բացի այդ, «Ժողովուրդ» օրաթերթը գրել է, որ Գեղարքունիքի մարզի Շորժա համայնքի Դրախտիկ գյուղի վարչական տարածքում՝ «Սեւան» ազգային պարկին պատկանող 2060 քմ հողի վրա, 2019 թ.-ից նոր առանձնատուն է կառուցվում: Թեեւ Շրջակա միջավայրի նախարարությունն ու «Սեւան» ազգային պարկը սեփականատիրոջ ինքնությունը թաքցնում են, մամուլը պարզել է, որ այն պատկանում է «Կապավոր» ՍՊ ընկերության տնօրենների խորհրդի նախագահ Արման Հակոբջանյանին՝ Արցախի քաղաքաշինության նախկին նախարարի որդուն: Նա, ըստ մամուլի, ՔՊ-ական պատգամավորների մտերիմն է, շահում է նաեւ պետական մրցույթներ: 2020թ. ՀՀ շրջակա միջավայրի նախարարը հայտարարեց. «Թույլատրելի կառուցապատման նիշից ցածր հատվածներում կառուցված ապօրինի շենք-շինությունների ընդհանուր քանակն այս պահին շուրջ 3.800 հատ է»: 3.800 ապօրինի շենք-շինություններից ՇՄ նախարարությունը 2021թ. 4 պարիսպ է քանդել, 9 վագոն-տնակ ու 5 շենք-շինություն: 2022թ.-ին ապամոնտաժման աշխատանքներ չեն կատարվել, այսինքն՝ Նիկոլ Փաշինյանն էլի խաբել է:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«ՀԱՅՓՈՍՏ»-Ը ՏՈՒԳԱՆՎԵԼ Է

ՔՊ-ականների եւ նրանց կանանց հանգրվան «Հայփոստ» ՓԲԸ-ում աղաղակող խախտումների դարաշրջան է սկսվել: ՊԵԿ-ը կրկին տուգանել է «Հայփոստ»-ին: Երբեմնի օրինապահ, բոլորիս հայտնի «Հայփոստ» ՓԲԸ-ն այն աստիճան է ընկղմվել ստվերային գործունեության մեջ, որ յուրաքանչյուր ամիս տուգանվում է: Այս անգամ ՀԴՄ կտրոնների չտրամադրման համար, կանոնների խախտման պատճառով «Հայփոստ»-ը տուգանվել է 2 միլիոն 600 հազար դրամ, եւ անկանխիկ գործառնություններ իրականացնելու համար՝ 400 հազար դրամ: Դժբախտ հիմնարկը, ըստ ամենայնի, ՔՊ-ականների եւ նրանց կանանց աստղաբաշխական աշխատավարձը ապահովելու համար ամբողջությամբ անցել է հարկման ստվերային ռեժիմի: Հավելենք, որ աջուձախ բոլորին օրինապահության դասեր տվող Նիկոլ Փաշինյանի կառավարության ենթակայությամբ է գործում «Հայփոստ» ՓԲԸ-ն: ArmLur.am-ը կապվեց «Հայփոստ» ՓԲԸ-ի խոսնակ Գեւորգ Աբրահամյանի հետ, որը խնդրեց մանրամասներ ստանալու համար հարցերը գրավոր ուղարկել:

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԱԶԱՏԵԼ

Ինչպես գրել էինք, Գայանե Գաբրիելյանին ազատել են շրջակա միջավայրի նախարարի տեղակալի պաշտոնից:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ պատճառը եղել է նախարար Հակոբ Սիմիդյանի հետ վատ հարաբերությունները՝ չնայած նրան, որ ամենաբարձր վարձատրվող փոխնախարարներից մեկն է եղել:

ArmLur.am-ը ուսումնասիրել է Գայանե Գաբրիելյանի կենսագրությունը եւ նկատել, որ նա իր գործունեությունը սկսել է 2008 թվականից՝ լինելով խանութի տնօրեն:

2012 թվականի եղել է «Երեւանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի տնտեսագիտության դասախոս, սակայն դա տեւել է գրեթե 10 ամիս: Նույն տարում արդեն աշխատել է ՀՀ ԱՆ «ՀՀ ազգային գիտաբժշկական գրադարան» ՊՈԱԿ-ում՝ որպես գնումների գծով խորհրդատու: Նա այստեղ աշխատել է ավելի քան 7 տարի:

Կարիերայում լուրջ աճ է նկատվել 2020 թվականին. նա այդ տարի նշանակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Հանրային ներդրումների քաղաքականության վարչության» պետ:

2021 թվականին Գայանե Գաբրիելյանը նշանակվել է շրջակա միջավայրի նախարարի տեղակալ:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ը գրել էր, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն արդեն տեւական ժամանակ է՝ շրջում է գերատեսչություններով, ղեկավարներին հարցեր է ուղղում իրենց ոլորտից, բայց պարզվում է՝ ոչ ոք իր ոլորտին չի տիրապետում, այդ թվում՝ շրջակա միջավարի նախարար Հակոբ Սիմիդյանը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՊԵԿ–Ը ՏՈՒԳԱՆԵԼ Է

Հայաստանը վերածնելու փոխարեն՝ անցան բիզնեսը վերածնելուն: «Վերածնվող Հայաստան» բարձրագոչ անունը կրող կուսակցության վերնախավը անցել է սննդի ակտիվ արդյունաբերության:

Հիշեցնենք, որ «Վերածնվող Հայաստան» կուսակցությունը ձեւավորվել է 2016թ.-ին, նախագահը Սյունիքի նախկին մարզպետ Վահե Հակոբյանն է:

«Վերածնվող Հայաստան» կուսակցության ղեկավարի բազմաթիվ բարեկամներ «Հայաստան» դաշինքի ցուցակում էին, Վահե Հակոբյանից կնոջ քրոջ՝ Մարիա Պետրոսյանի ամուսնու սննդի գործարանը ակտիվ եռուզեռի մեջ է, որի բնականոն գոծընթացը նաեւ օրերս խաթարել է ՊԵԿ-ը:

ՊԵԿ-ը, արձանագրելով չգրանցված աշխատողի դեպք, տուգանել է «Իտալիան ֆուդ» կազմակերպությանը 250 հազար դրամով: Ինչ վերաբերում է ընդդիմության երբեմնի առանցքային լիդեր Վահե Հակոբյանի՝ մեկ տարուց ավել առաջ հրապարակային խոստմանը, թե կուսակցությունը շուտով ողջ ՀՀ-ով անցնելու է ակտիվ գործողությունների, մնաց լոկ խոստում:

ArmLur.am-ը փորձեց կապ հաստատել Վահե Հակոբյանի հետ՝ իրավիճակի մասին մանրամասներ իմանալու համար, սակայն Վահե Հակոբյանն ասաց, որ չի ցանկանում մեր հարցերին պատասխանել:

ՀԱՅԱՍՏԱՆ–ԲԵԼԳԻԱ

Միջուկային էներգիայի անդրանիկ գագաթնաժողովի շրջանակում կայացել է վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը Բելգիայի վարչապետ Ալեքսանդր Դը Քրուի հետ: Զրուցակիցները քննարկել են Հայաստան-Բելգիա համագործակցությանը վերաբերող հարցեր:

Կողմերը կարեւորել են Հայաստանում Բելգիայի դեսպանության բացումը եւ համոզմունք հայտնել, որ այն նոր ազդակ կհաղորդի բազմաոլորտ փոխգործակցությանը:

Նիկոլ Փաշինյանը եւ Ալեքսանդր Դը Քրուն անդրադարձել են Հարավային Կովկասում առկա իրավիճակին, մասնավորապես՝ Հայաստան-Ադրբեջան խաղաղության պայմանագրի գործընթացին, տարածաշրջանային ենթակառուցվածքների ապաշրջափակման հնարավորություններին:

Նիկոլ Փաշինյանը զրուցակցին է ներկայացրել ՀՀ կառավարության «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը եւ դրա սկզբունքները: Տարածաշրջանում խաղաղության եւ կայունության ամրապնդման գործում երկուստեք կարեւորվել է ԵՄ դիտորդական առաքելության գործունեությունը Հայաստանում:

Մտքեր են փոխանակվել նաեւ Հայաստան-Եվրոպական միություն համագործակցության շուրջ: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել ԵՄ աջակցությամբ մեր երկրում իրականացվող ժողովրդավարական բարեփոխումներին, վիզաների ազատականացման շուրջ երկխոսությանը վերաբերող հարցերին:

«ԽՆԴԻՐԸ 4 ԳՅՈՒՂԵՐԸ ՉԵՆ»

ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԽՈՐԱՆԱԼՈ՞Ւ ԵՆ

Մինչ օրս ակտիվ են Տավուշի մարզի հանձնման մասին խոսակցությունները, սակայն վարչապետ Փաշինյանը Տավուշի բնակիչների հետ հանդիպման ժամանակ նշել էր, որ ոչինչ էլ չի հանձնելու: Քաղաքական իշխանությունները նաեւ նշել են, որ այդ տարածքները դե յուրե Հայաստանի տարածքները չեն: Չնայած նրան, որ Փաշինյանը ասել է, որ ոչինչ էլ չի հանձնելու, Տավուշի բնակիչները, այնուամենայնիվ, պատրաստ են ցանկացած կերպ պաշտպանել իրենց հողը՝ դրանից չհրաժարվելով:

Հիշեցնենք, որ մարտի 20-ին՝ կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ, պատգամավորները եւ նախարարները թեժ քննարկում էին ծավալում Տավուշի շուրջ ստեղծված վերջին իրադարձությունների վերաբերյալ: ArmLur.am-ի հետ զրույցում քաղաքագետ Արմեն Բաղդասարյանը նշեց, որ այս մասին շատ է խոսվել, եւ որ Փաշինյանը եւ՛ սահմանամերձ գյուղերն է տալու, եւ՛ ճանապարհն է հայտնվում վտանգի տակ, եւ՛ ակնհայտ է, որ այդ ճանապարհը չի գործելու, որովհետեւ դրա որոշ հատվածներ, ըստ Նիկոլ Փաշինյանի, անցնում են Ադրբեջանի տարածքով: «Դա շատ լուրջ վտանգ է լինելու Հայաստանի համար ոչ միայն այդ գյուղերի առումով, այլեւ Հայաստանի Հանրապետության միջպետական ճանապարհի առումով. դա ակնհայտ է, եւ միայն դա չէ վտանգը. դա կարճաժամկետ վտանգ է: Վտանգը նաեւ այն է, որ Ադրբեջանը դրանից հետո վստահաբար պահանջելու է անկլավները, պահանջելու է անխափան անցում դեպի անկլավները, այսինքն՝ նաեւ ճանապարհ, եւ դա, մեծ հաշվով, խոցելի է դարձնելու Հայաստանի հյուսիս-արեւելքը»,- ասաց քաղաքագետը:

Նշենք, որ իր ամենշաբաթյա ճեպազրույցում ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան անդրադարձել է վարչապետ Փաշինյանին եւ մեկնաբանել է վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարությունը, որ եթե հայկական կողմը հրաժարվի քննարկել սահմանազատման եւ սահմանագծման հարցերը Ադրբեջանի հետ, ապա շաբաթվա վերջին կարող է պատերազմ սկսել: Զախարովան մասնավորապես նշել է, որ դժվար թե սեփական բնակչությանը վախեցնելը Հայաստանին հարմար արդյունքի հասնելու լավագույն միջոցն է: Անդրադառնալով Մարիա Զախարովայի ասածին՝ քաղաքագետը նշեց, որ չի ցանկանում մեկնաբանել Զախարովայի հայտարարությունները:

«Ես չեմ ուզում մեկնաբանել Զախարովայի հայտարարությունները: Եթե Զախարովայի ազգանունը չլիներ, տպավորություն կստանայի, որ նա ոչ թե Ռուսաստանի, այլ Ադրբեջանի արտգործնախարարության խոսնակն է: Խնդիրն այստեղ Ռուսաստանը չէ, խնդիրն այն է, որ, այո, իսկապես Նիկոլ Փաշինյանը սեփական ժողովրդին վախեցնելով, պատերազմի նկատմամբ սարսափ արմատավորելով հայրենի գիտակցության մեջ՝ փորձում է այնպես անել, որ հասարակությունը համակերպվի իր զիջումներին, իր զիջելի քաղաքականության հետ»,- ասաց Բաղդասարյանը:

Քաղաքագետն ընդգծեց, որ եթե պատերազմ լինի, եւ Ադրբեջանը հարձակվի Հայաստանի վրա, ապա Ռուսաստանը չի կարող չխառնվել այդ ամենին, որովհետեւ Հայաստանը ունի երկկողմանի պայմանագիր Ռուսաստանի հետ եւ ՀԱՊԿ անդամ է, այսինքն՝ Ռուսաստանը պարտավոր է միջամտել այս դեպքում:

Վերադառնալով անվտանգային խնդիրներին եւ սահմանամերձ դարձող մարզերին՝ քաղաքագետն ասաց. «Անվտանգային խնդիրներ կան հիմա, եւ այդ անվտանգային խնդիրները խորանալու են: Խնդիրն այդ 4 գյուղերը չեն, դրանով ոչ մի էդպիսի մարզ չկա, որ առաջ սահմանամերձ չէր, հիմա սահմանամերձ է դառնալու, խնդիրն այդ չէ: Նիկոլ Փաշինյանի այդ քաղաքականությունը նորմալ կլիներ, եթե դա լիներ փոխադարձ, եթե Ադրբեջանն իր հերթին հարգեր այդ սահմաններն ու իր զորքերը դուրս բերեր. սա մեկ. եւ երկրորդ՝ եթե Ադրբեջանը իսկապես մտադիր լիներ Հայաստանի հետ խաղաղություն հաստատել, բայց քանի որ Ադրբեջանը այդ մտադրությունը չունի, եւ քանի որ Ադրբեջանը այդ նույն սահմանները չի ճանաչում, դա նշանակում է, որ Նիկոլ Փաշինյանի՝ այդ միակողմանի լինելը նրանք չեն մոտեցնելու խաղաղության, այլ ավելի շուտ մոտեցնելու են հաջորդ պատերազմին, ինչը Ադրբեջանի համար ավելի նպաստավոր է:

Խնդիրը քաղաքական խնդիր է. սա այդ մարզերի, այդ գյուղերի խնդիրը չի լինելու: Էլի եմ ասում՝ եթե այս գործընթացը գոնե մի քայլով մոտեցներ խաղաղությանը, ապա կարելի էր դա քննարկել: Բայց քանի որ հակառակն է, այս դեպքում դա նշանակում է, որ իր ձեռքով, ակնհայտորեն հեռանկարում ունենալով նոր պատերազմ, գիտակցաբար Ադրբեջանին ավելի նպաստավոր դիրքեր ենք տալիս այդ պատերազմի համար: Խնդիրը Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության հարաբերությունների մեջ է»:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՇՈՒ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻ՞Ն, ԹԵ՞ «ԴՈՒՔՅԱՆ»

Մարտի 20-ին խորհրդարանում ականատես եղանք իշխանական եւ ընդդիմադիր պատգամավորների միջեւ հերթական թեժ վիճաբանությանը:

Ընդդիմադիր պատգամավորները կրկին հայտնվել էին Նիկոլ Փաշինյանի եւ իշխանական պատգամավորների թիրախում:

Այսպիսով, կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ պատգամավորները եւ նախարարները թեժ քննարկում էին ծավալում Տավուշի շուրջ ստեղծված վերջին իրադարձությունների վերաբերյալ, եւ հանկարծ, մոռանալով այս ամենը, սկսվեց հերթական վիճաբանությունը պատգամավորների միջեւ: Ամեն բան սկսվեց «Հայաստան» խմբակցության պատգամավոր Լեւոն Քոչարյանի ելույթից: Երբ վերջինս հարց ուղղեց Նիկոլ Փաշինյանին, ԱԺ փոխխոսնակ Ռուբեն Ռուբինյանը հարկ համարեց ճշտել, թե հարցը ում է ուղղվում:

Իրավիճակը էլ ավելի թեժացավ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանի ելույթի ժամանակ:

Պարզվում է՝ Նիկոլ Փաշինյանը ծանր էր տարել Լեւոն Քոչարյանի՝ «կառավարության գլուխ» դիմելաձեւը:

Եվ հաջորդիվ, երբ Նիկոլ Փաշինյանը պատասխանում էր մեկ այլ պատգամավորի՝ Գառնիկ Դանիելյանի հարցին, մի քանի անգամ շեշտեց՝ «ձեր քաղաքական ուժի գլուխը»՝ նկատի ունենալով Քոչարյանին:

Այս ամենից հետո ընդդիմադիրները մեծ աղմուկ բարձրացրին, ու սկսվեց իշխանություն-ընդդիմություն հերթական «փոխհրաձգությունը»:

Բանը հասավ նրան, որ Փաշինյանը ուղիղ սպառնալիք հնչեցրեց ընդդիմադիր պատգամավորի հասցեին:

ԱԺ նիստով, սակայն, ամեն բան չավարտվեց: Մարտի 20-ի երեկոյան իշխանության տարբեր ներկայացուցիչներ, նրանց սատարող քաղաքական գործիչներն ու փորձագետները միաբերան Լեւոն Քոչարյանի վերաբերյալ կոշտ եւ հեգնական գրառումներ էին անում:

Այս ամենից անմասն չմնաց նաեւ Նիկոլ Փաշինյանի ընտանեկան լրատվամիջոցը՝ «Հայկական ժամանակը», որտեղ նույնպես Վանո Սիրադեղյանի խոսքերի մոտիվներով մի հոդված-ակնարկ էր տպվել՝ «Պետություն ղեկավարելը թաղի լակոտների կռիվ չէ, որ քրֆես ու փախչես. ի՞նչ է ճոճվում Լեւոն Քոչարյանի ծոծրակին» վերնագրով:

Խորհրդարանում կրքերը թեժացան նաեւ այն բանից հետո, երբ Ազգային ժողովի փոխնախագահ Հակոբ Արշակյանը «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանից դիմեց՝ տիկին Օհանյան:

Եվ այսպես, ամեն անգամ, երբ տարածքային նոր զիջումների հարց է երեւան գալիս, Նիկոլ Փաշինյանն ու իշխանական պատգամավորները սկսում են շոուներ բեմադրել խորհրդարանում:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՀԵՏԱԽՈՒԶՎՈՒՄ ԵՆ

ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝ ԿԱԼԱՆՔ

ՀՀ ոստիկանության Կոմիտեի Երեւան քաղաքի ոստիկանության վարչության Արաբկիր վարչական շրջանի ոստիկանության բաժնում շարունակվում է «Երեւանի ինֆորմատիկայի պետական քոլեջ»-ի ուսանողի սպանության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:



Հիշեցնենք, որ 17-ամյա երիտասարդը, որը ենթադրյալ հանցագործություն կատարած անձի հետ տեւական ժամանակ անձնական հարցի առնչությամբ գտնվել է թշնամական հարաբերությունների մեջ, կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքները ստացել էր սույն թվականի մարտի 12-ին՝ ժամը 11:30-ի սահմաններում, Երեւան քաղաքի Մամիկոնյանց 52/3 հասցեի մոտ:

Վարույթի շրջանակներում ձեռնարկված քննչական անհրաժեշտ գործողությունների, օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել են քննության համար էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ միջադեպին մասնակից եւս երկու անձի ինքնություն, որոնք սպանության կասկածանքով ձերբակալված 21-ամյա երիտասարդի ընկերներն են: Քննիչների եւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների համատեղ գործողությունների արդյունքում ընկերներից մեկը եւ 21-ամյա երիտասարդը հայտնաբերվել, ներկայացվել են վարույթն իրականացնող մարմնին եւ ձերբակալվել:

Իրականացված վարութային գործողություններով անհատականացվել են նրանցից յուրաքանչյուրի գործողությունները, որոնց տրվել են իրավական գնահատականներ:

Նախաքննական մարմնի կողմից ձեռնարկված մեծածավալ միջոցառումներով պարզվել է նաեւ միջադեպի ժամանակ տուժողին մահակի գործադրմամբ մարմնական վնասվածքներ հասցրած անձի ինքնությունը, որը 21-ամյա երիտասարդի մեկ այլ ընկերն է, ում նկատմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասով, հանրային քրեական հետապնդում է հարուցվել, եւ հայտարարվել հետախուզում:

Քննությամբ նաեւ նոր հանգամանքներ են ի հայտ եկել. մասնավորապես՝ տվյալներ են ստացվել այն մասին, որ կողմերի միջեւ նախկինում տեղի է ունեցել նաեւ այլ միջադեպ, որը դարձել է վրեժի շարժառիթով 17-ամյա պատանու սպանության պատճառ: Դեպքին նախորդող ժամանակահատվածում տեղի ունեցած այս եւ այլ միջադեպերի առնչությամբ ձեռնարկվում են քննչական, ապացուցողական եւ վարութային անհրաժեշտ միջոցառումներ:

Նախաքննության ընթացքում 21-ամյա մեղադրյալի բնակության վայրում, օրենքով սահմանված կարգով, կատարվել է խուզարկություն, որի ժամանակ հայտնաբերվել են ենթադրյալ հանցագործության գործիք հանդիսացող ծալովի դանակը եւ փայտյա մահակը՝ չորացած արնանման հետքերով, ինչպես նաեւ չորացած արնանման հետքերով հագուստներ: Կատարվել են միջադեպի այլ մանրամասներ պարզելու ուղղությամբ անհրաժեշտ գործողություններ՝ առերես հարցաքննություններ, տեսագրության զննություններ, խուզարկությամբ հայտնաբերվածի վերաբերյալ նշանակվել են դատակենսաբանական, դատաքրեագիտական, իսկ ավելի վաղ՝ նաեւ դատաբժշկական, դատակենսաբանական, դատամատնադրոշմային, համալիր դատաբժշկական եւ դատահետքաբանական փորձաքննություններ:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ 21-ամյա երիտասարդին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով եւ 297-րդ հոդվածի 3-րդ մասով, իսկ վերջինիս վերոհիշյալ ընկերոջը՝ 297-րդ հոդվածի 3-րդ մասով: Միջնորդություն է ներկայացվել դատարան՝21-ամյա երիտասարդի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին, որը բավարարվել է: Վերջինիս ընկերոջ նկատմամբ կիրառվել է տնային կալանք խափանման միջոցը:

Նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ միջադեպին մասնակից մյուս անձանց ինքնությունը պարզելու, նրանց հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու ուղղությամբ:

Հետախուզվողին հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու, ինչպես նաեւ քննությանը հետաքրքրող այլ տվյալներ ձեռք բերելու նպատակով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ հանձնարարություն է տրվել ՀՀ ՆԳՆ ոստիկանության համապատասխան ստորաբաժանմանը:

Նախաքննությունը շարունակվում է:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՊԱՏԱՀԱԿԱՆ ԿՐԱԿՈՑ

Armlur.am-ին հայտնի դարձավ, որ ՌԴ 102-րդ ռազմաբազայի զինվորը մահացել է ծառայակցի կողմից արձակած կրակոցից: Armlur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ դեպքը եղել է զենքի ընդունման-հանձնման ժամանակ, եւ, ըստ նախանական վարկածի, կրակոցը պատահաբար է եղել:

Ժամը 14:00-ի սահմաններում ՌԴ 102-րդ ռազմաբազայի Կամխուտի զորավարժարանից հրազենային մահացու վիրավորումով Գյումրու ԲԿ է տեղափոխվել ռուս զինծառայող՝ 22-ամյա Ռոման Շատերնիկովը: Գյումրի ԲԿ փոխտնօրեն Արմեն Խաչատրյանն «Ազատությանը» փոխանցել էր, որ զինծառայողն իրենց մոտ տեղափոխվել է արդեն մահացած, հրազենային վիրավորման հետքերը եղել են պարանոցի ու իրանի հատվածում՝ ձախ կողմից:

Ըստ տեղեկությունների՝ Կամխուտի զորավարժարանում ընթանում են զորավարժություններ: Թե ինչ հանգամանքներում է ռուս զինծառայողը ստացել մահացու հրազենային վիրավորում, այս պահին պարզ չէ: Կամխուտի զորավարժարանում ռուսական 102-րդ ռազմաբազան պարբերաբար իրականացնում է մարտական զորավարժություններ: Այս տարածքը, քանի որ սահմանազատված չէ արգելաքներով, հարակից գյուղերի բնակիչները, զրկվելով արոտավայրերից, իրենց անասուններին այդ տարածքում են արածեցնում, երբ զորավարժություններ չեն լինում: Այս տարածքում Վահրամաբերդ գյուղից արդեն 3 մարդ է զոհվել ականի պայթյունից, որոնցից 2-ը՝ երեխաներ:

ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Մարտի 19-ին՝ ժամը 21:32-ին, ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն հիվանդանոցից հաղորդում էր ստացվել, որ կտրած-ծակած վերքերով բուժօգնության է տեղափոխվել 37-ամյա երիտասարդ: Ըստ բժշկի տեղեկանքի՝ նա ի վիճակի չի եղել բացատրություն տալու:

Նախաձեռնվել է քրեական վարույթ:

ՆԳՆ ոստիկանության Մալաթիայի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ Հաղթանակ թաղամասում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ հիվանդանոց տեղափոխվածին դանակահարել էր նույն թաղամասի 31-ամյա հիվանդանոց տեղափոխվածին դանակահարել էր նույն թաղամասի 31-ամյա բնակիչը: Նա հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել է Մալաթիայի բաժին, որտեղ հայտնել է, որ նշված արարքը կատարել է ինքը իր մոտ եղած դանակով: Նա եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

Հետագա միջոցառումներով պարզվել է, որ հիվանդանոց տեղափոխվածը ընկերների հետ կենցաղային հարցերի շուրջ վիճաբանել է 31-ամյա երիտասարդի եւ երկու այլ անձանց հետ, որի ընթացքում 31-ամյա երիտասարդը դանակով անկանոն շարժումներ է արել, ինչի հետեւանքով 37-ամյա երիտասարդը ստացել է մարմնական վնասվածքներ: Դեպքի վայրում հայտնաբերել է հանցագործության գործիք դանակը:

31-ամյա երիտասարդը ձերբակալվել է: Քրեական վարույթը շարունակվում է:

ՋՈՒՐ՝ ԲԱՆԱԿՈՒՄ

ԱՌԱՆՑ ԲԱՎԱՐԱՐ ՀԻՄՔԵՐԻ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Կարեն Խաչատուրովին մեղադրանք է առաջադրվել.

Նա մեղադրվել է այն բանի համար, որ հանդիսանալով թիվ Ն զորամասի 1-ին հրաձգային գումարտակի հետախուզական դասակի 1-ին հետախուզության ջոկի ավագ հետախույզ, կոչումով շարքային, զորամասի հրամանատարի հրամանով ընդգրկված լինելով մարտական հերթապահության զորամասի պահպանության տեղամասի թիվ մարտական դիրքի տարածքում տեղակայված հետախուզական դարանում՝ որպես դիտորդ, 2021թ.-ի սեպտեմբերի 13-ին՝ ժամը 22:00-ի սահմաններում՝ իր հանգստի ժամին, գտնվելով իրենց համար նախատեսված վրանում, լսելով դեպի վրանը մոտեցող անձանց ձայներ, որոնք հանդիսացել են նույն հետախուզական դարակի ավագի օգնական, սերժանտ Լեւոն Սուքիասյանը, դիտորդ, սերժանտ Մկրտիչ Հովակյանը, դիտորդ, շարքային Վարդան Ստեփանյանը եւ հանգստացող հերթափոխ, շարքային Սուրեն Հարությունյանը, խախտել է ՀՀ անվտանգության ապահովմանն ուղղված մարտական հերթապահության կրելու պահանջները, այն է՝ չհանդիսանալով տվյալ ժամի դիտորդ կամ կացարանի դիտորդ, անտեսելով նշված ծառայություններն իրականացնող զինծառայողների առկայությունը, առանց բավարար հիմքերի ենթադրելով, որ հետախուզական դարանի վրանի ուղղությամբ եկող անձինք հակառակորդի զինված ուժերի զինծառայողներ են, վերջիններիցս չպահանջելով զինծառայողներին ճանաչելու նպատակով որոշված տվյալ օրվա նշաբանը, իր բացականչությանը պատասխան չստանալով, վրանից վերցրել է իրեն ամրակցված ԿՁԳ-74 տեսակի գնդացիրը եւ կրակահերթ է արձակել նրանց ուղղությամբ, որն առաջացրել է ծանր հետեւանքներ. սերժանտ Լեւոն Սուքիասյանը ստացել է հրազենային, իսկ սերժանտ Մկրտիչ Հովակյանը՝ մահացու հրազենային վնասվածքներ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 20-ից մարտի 21-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 103 դեպք, որոնցից 8-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՍԵՌԱՎԱՐԱԿԸ՝ ՏԱՎՈՒՇՈՒՄ

Նախկինում հայտնել ենք, որ Իջեւան քաղաքում տարածվել են վեներական հիվանդություններ: Դրանք տարածվել են գլխավորապես թեթեւ վարքի տեր երկու ջահել կանանց միջոցով, վեներական հիվանդություններով վարակվածները տարբեր տարիքի, զբաղմունքի տեր բազմաթիվ անձինք են, դրան թվում նաեւ Իջեւանի հանրակրթական դպրոցների բարձր դասարանների աշակերտ տղաներ կան, սակայն դպրոցականները բուժման համար Իջեւան քաղաքի բուժհաստատություններ չեն դիմել: Հանրակրթական դպրոցների աշակերտ տղաների՝ վեներական հիվանդություններով վարակվելն արտառոց երեւույթ է, որը վկայում է աշակերտների դաստիարակության գործում լուրջ բացթողման մասին: Տավուշի մարզի հանրակրթական դպրոցները գտնվում են Տավուշի մարզպետարանի ենթակայության տակ: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ նրան հարցնելով, թե այդ դեպքի կապակցությամբ մարզպետարանն ինչ է ձեռնարկել: Մարզպետարանի պատասխանում նշված է. «Վարակիչ կամ վտանգավոր հիվանդությունների հայտնաբերման դեպքում բուժհիմնարկը շտապ հաղորդում է ուղարկում ՀՀ առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնի «Տավուշ» մասնաճուղ, որն էլ իր հերթին ուղարկում է ՀՀ առողջապահության նախարարություն: Մնացած գործառույթները ՀՀ առողջապահության նախարարության տիրույթում է»:

ՇԵՆՔԸ ՔԱՆԴԵԼՈՒ ԵՆ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ նրան հարցնելով, թե երբ է կառուցվելու Բերդ համայնքի Նավուր գյուղի դպրոցի նոր շենքը, դպրոցի հին կառույցի քանի մասնաշենքն է քանդվելու: Մարզպետը պատասխանել է. «Նավուրի դպրոցի նոր շենքի կառուցումը կմեկնարկի ամռանը, դպրոցաշենքը կկառուցվի ուսումնական վթարային շենքի տեղում, քանդման ենթակա է թիվ 1 մասնաշենքը»: Նավուրի բնակիչներն ասում են, որ քանդման համար նախատեսված թիվ մեկ, եռահարկ մասնաշենքի տանիքը եւ պատուհանները երկու տարի առաջ են փոխել, նորացրել: Նավուրի դպրոցը 3 հեկտար տարածք ունի, որից 6 հազար քառակուսի մետրը նախատեսված է դպրոցի նոր շենք կառուցելու համար: Նավուրցիներն ասում են, որ դպրոցի նոր շենք կառուցելու համար ազատ տարածքները լիուլի են, ուստի կարիք չկա թիվ 1 մասնաշենք՝ եռահարկ շենքը քանդելու: Այդ շենքը ամեեին էլ վթարային չէ, կառույցի հիմքերն ամուր են, միայն միջնորմ պատերն են շարժվում, դրանք քանդելու կարիք կա: Նավուրի բնակիչները ասում են, որ, շենքը քանդելու փոխարեն, այն կարելի էր նորոգել, օգտագործել բնակավայրի կարիքների համար, իսկ շենքը քանդելուց հետո գոյացած շինարարական աղբը տեղափոխելը, տեղավորելը խնդիրներ է առաջացնելու: Դպրոցի շենք կառուցելու համար ազատ մեծ տարածքներ կան. ոչ վթարային, հին շենքը նախատեսում են քանդել ծրագրի նախահաշիվը մեծ սարքելու համար:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

«ԹՈՂ «ՌԱԴՆԵՐԸ ՔԱՇԵՆ»

«ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԿՈՆՖԼԻԿՏ Է ՀՐԱՀՐՈՒՄ»

ՌԴ պետական դումայի պատգամավոր Կոստանտին Զատուլինը «Խոսում է Մոսկվան» ռադիոկայանին տված հարցազրույցում հայտարարել է, որ ՀՀ սահմանամերձ գյուղերի հնարավոր հանձնումը Ադրբեջանին կվտանգի երկրի ռազմավարական հաղորդակցությունները եւ ճանապարհ կբացի նոր զիջումների համար, մասնավորապես՝ այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» հարցում:

Ռուս քաղաքական գործչի խոսքով՝ Նիկոլ Փաշինյանը շարունակում է իր նախկին գիծը՝ ուղղված Ադրբեջանի շահերը բավարարելուն, բայց միեւնույն ժամանակ փորձում է երեւալ մի մարդ, որ ստիպված է դիմել դրան:

Նշենք, որ ռուս պատգամավորը չի համարում Ադրբեջանին Ռուսաստանի դաշնակից՝ անգամ Հայաստանի արեւմտամետ ֆոնին:

Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում քաղաքագետ Հայկ Սուքիասյանն ասաց, որ այս հայտարարություններով Ռուսաստանը կոնֆլիկտ է հրահրում:

«Ես Զատուլինին հարցնում եմ՝ այնտեղ ռուսներ կան, չէ՞, կանգնած, իրենք իրենց գլուխը ի՞նչ պատին են տալիս, որ անվտանգություն չեն ապահովում: Իրենք ի՞նչ են անում այդտեղ: Իրենց կանգնեցրել են այդտեղ, որպեսզի Հայաստանի Հանրապետությունը գյուղերը տա, իրենք էլ ասեն՝ մի տո՛ւր: Իրենք կոնֆլիկտ են հրահրում: Ես իրենց պահանջում եմ, որ Ռուսաստանն իր աշխատանքը կատարի. եթե Ռուսաստանն իր պարտականությունը չի կատարում, ապա իրենց պատգամավորների «զռռոցները» մեզ հետաքրքիր չեն: Թող «վեշերը» հավաքեն ու «ռադները քաշեն»: Այ երբ Ռուսաստանը ռադը կքաշի այդտեղից, Հայաստանի Հանրապետությունը ոչինչ էլ չի անի»,- ասաց Սուքիասյանը:

Սուքիասյանը նաեւ նշեց, որ Զատուլինը ձեւական ճշմարտություններով սոփեստություններ է անում, եւ որ Ադրբեջանի շահերը տարածաշրջանում Թուրքիայից եւ Ադրբեջանից շատ պաշտպանում է Ռուսաստանը:

«Ես իրենց հարց եմ տալիս՝ դուք չէի՞ք, որ ձեր գտնվելու վայրում, որտեղ դուք պետք է գտնվեիք Արցախում, պետք է գտնվեիք 3 պետությունների համաձայնությամբ: Դուք հայտարարում եք, որ Ադրբեջանը կատարել է հակաահաբեկչական գործողություն, եւ մի ամբողջ 120 հազար մարդու իր աչքի առաջ շպրտել են դուրս: Դուք չե՞ք արել. դուք եք արել. հիմա դուք եք Ադրբեջանի շահերը սպասարկո՞ւմ, թե՞ Հայաստանի իշխանությունը»,- հավելեց Սուքիասյանը:

Քաղաքագետի խոսքով՝ Ռուսաստանը շարունակում է հովանավորել թուրքական աշխարհի կամ ռուս-թուրքական աշխարհի համագործակցությունը, այն է՝ Հայաստանին չթողնել շանս ապրելու:

«Զատուլինը թող մեզ բացատրի՝ որ նոյեմբերի 9-ի հայտարարությունը Արցախի մասին է, ըստ էության, Արցախի շուրջ ստեղծված հայտարարություն է, ինչու է, որ ռուսական զորքերը գտնվում են Արցախում, բայց Արցախում արցախցի չկա: Ինչո՞ւ է այդպես: Ինքը թող սա բացատրի: Մենք ինչ որ կուզենք, կանենք, մեզ պետք է, մենք լուսնի հետ էլ ենք բանակցելու, եթե մեզ պետք է, Թուրքիայի հետ էլ ենք բանակցելու, եւ իրենք այստեղից «ֆուկ» են լինելու: Իրենք 200 տարի է՝ խցկվել են Հայաստանի մարմնի մեջ, Հայաստանի արյան հավերժ շահառուն են: Հանում Թուրքիային ուղարկում են մեր դեմ, որպեսզի հետո իրենք գան՝ որպես մեր փրկիչ. թող հեքիաթներ չպատմեն մեզ»,- ասաց քաղաքագետը:

Քաղաքագետը նաեւ հավելեց, որ տարածաշրջանում Ռուսաստանի դաշնակիցը Ադրբեջանն է, Ռուսաստանը իրեն թշնամի պետություն է համարում Հայաստանի Հանրապետությանը, եւ ավարտելով զրույցը՝ ասաց. «Իրենք Արցախում կազմակերպեցին սպանդ, արցախահայությանը տեղահանեցին, 9 ամիս Լաչինի միջանցքը փակեցին, սովամահության ենթարկեցին ժողովրդին, հիմա էլ եկել ու ասում է՝ դե գիտեք ինչ կա, Ադրբեջանը մեր դաշնակիցը չի. բա ո՞ւմ դաշնակիցն է: Ինքը սուտ է խոսում. իրենց դաշնակիցը Ադրբեջանն է: Զատուլինի նպատակն այն է, որ մեր ժողովրդի հույզերի հետ խաղա եւ տրամադրի իշխանության դեմ»:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ

ԽԱԹԱՐՎԱԾ Է ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը մարտի 21-ին ընդունել է Գիտությունների ազգային ակադեմիայի օրգանական եւ դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի ներկայացուցիչներին:

ԿԳՄՍ նախարարությունից հայտնում են, որ գիտական կենտրոնի ներկայացուցիչները ներկայացրել են իրենց մտահոգությունը՝ մոտ 20 տարի առաջ ինստիտուտի տարածքից առանձնացված եւ օտարված տարածքում ընթացող ծավալուն կառուցապատում իրականացնելու վերաբերյալ: Նրանց խոսքով՝ կենտրոնի հարեւանությամբ ընթացող մեծածավալ շինարարական աշխատանքների պատճառով խաթարված է կենտրոնի գիտաշխատողների գործունեության բնականոն ընթացքը: Նախարարության տարածած հաղորդագրության մեջ նշվում է, որ վերջին տարիներին պետական ֆինանսավորմամբ ինստիտուտում գիտական սարքավորումների ձեռք բերման մեծ աշխատանքներ են իրականացվել, այդ թվում՝ ՀՀ-ի ու տարածաշրջանի համար եզակի ու թանկարժեք սարքավորումների, որոնց նպատակային աշխատանքը ստեղծված պայմաններում, մասնագետների դիտարկմամբ, լրջորեն վտանգված է: Բացի դրանից, գիտաշխատողները չեն կարողանում լիարժեքորեն եւ ամբողջությամբ իրականացնել նաեւ այն գիտական նախագծերը, որոնցում ընդգրկված են:

ԿԳՄՍ նախարարը նշել է, որ խնդիրը երկար տարիների պատմություն ունի, եւ անհրաժեշտ է քննարկել գործընթացում ներգրավված բոլոր կողմերի եւ պետական կառույցների հետ:

«ՀՀ կառավարությունը գիտական սարքավորումների ձեռք բերման, գիտնականների վարձատրության ու խրախուսման տարատեսակ այլ ծրագրերի ուղղությամբ մեծ ներդրումներ է կատարել: Մենք եւս շահագրգիռ ենք, որ գիտատեխնոլոգիական կենտրոնի աշխատանքը չխաթարվի»,- ասել է ԿԳՄՍ նախարարը եւ ընդգծել՝ պետք է գտնել լուծման այնպիսի տարբերակներ, որոնցում համադրելի կլինեն գիտական կենտրոնի շահերը, սեփականատիրոջ օրինական իրավունքները եւ պետության առաջնահերթությունները: Ժաննա Անդրեասյանը հավաստիացրել է՝ խնդիրը խորությամբ կուսումնասիրվի, եւ հարցը կդառնա քննարկման առարկա՝ հիմնվելով այն գաղափարի վրա, որ որեւէ ոլորտում ընթացող գործընթաց պետք է չխոչընդոտի գիտական գործունեությանը՝ հաշվի առնելով, որ գիտության ոլորտի զարգացումը Հայաստանի Հանրապետության ռազմավարական առաջնահերթություններից է, եւ Կառավարության տարբեր ծրագրերով սահմանվել են հավակնոտ թիրախներ՝ գիտական գործունեության զարգացման ուղղությամբ:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 9 պատահար. 13 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ԳԻՏԽՈՐՀՈՒՐԴԸ ԿՈՐՈՇԻ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ ապրիլի 3-ին տեղի է ունենալու Երեւանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի դեկանի ընտրություններ: Մեր տեղեկություններով՝ դեկանի պաշտոնում իրենց թեկնածություններն են առաջադրել Գեւորգ Պետրոսյանը եւ Հարություն Խաչիկյանը:

ArmLur.am-ը կապ հաստատեց Հարություն Խաչիկյանի հետ՝ հասկանալու համար՝ ում հաղթելու հավանականությունն է ավելի մեծ.

«Մրցույթը հայտարարվել է դեկանի թափուր հաստիքի համար, ես ցանկություն ունեի դիմելու, եւ, բացի դա, ես ստացել եմ մեր կոլեկտիվի երաշխավորությունը մեր ֆակուլտետի գիտական ընդլայնված խորհրդի նիստում եւ դիմել եմ: Գեւորգ Պետրոսյանն էլ նույնպես դիմել է պաշտոնին հավակնելու համար, եւ հիմա մրցույթը կկայանա, եւ արդյունքում Երեւանի պետական համալսարանի գիտխորհուրդը կորոշի՝ ով է արժանի այդ պաշտոնը զբաղեցնելու: Ես այս պահին կանխատեսումներ անել չեմ կարող»:

Հարություն Խաչիկյանի խոսքով՝ ընտրվելու դեպքում շնորհակալություն կհայտնի խորհրդից եւ կշարունակի իր աշխատանքային գործունեությունը արդեն այլ կարգավիճակում. եթե չընտրվի, կրկին շնորհակալ կլինի եւ կրկին ամբիոնի պրոֆեսորի պաշտոնում կշարունակի աշխատել:

Հիշեցնենք, որ Երեւանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի գործող դեկանը Գագիկ Ղազինյանն է:

ԿԱՄԵՑՐԵԼ Է

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Արարատի մարզային կենտրոնի տեսուչները վերահսկողական միջոցառումներ են իրականացրել «Արարատի մարզի Մասիս համայնքի Նորամարգ գյուղի «Ծիածան» մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի խոհանոցում:

Ստուգման ընթացքում ակնհայտ է դարձել, որ այն գործել է սահմանված սանիտարահիգիենիկ նորմերի խախտումներով:

Մասնավորապես՝ խոհանոցը, դրա առաստաղները, վերին ամրություններ-ը նախագծված, կառուցված ու տեղակայված չեն եղել այնպես, որ բացառվի կեղտի կուտակումը, թունավոր նյութերի հետ շփումը, օտար մասնիկների թափանցումը սննդամթերքի մեջ եւ գոլորշու խտացումը կամ մակերեսների վրա անցանկալի բորբոսների առաջացումը:

Սննդամթերքի անվտանգությունը վերահսկող մարմինը կասեցրել է մանկապարտեզի խոհանոցի արտադրական գործունեությունը, սահմանվել է հայտնաբերված խախտումները վերացնելու ժամկետ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՐԻԶՄԸ ԿԿՈՐՑՆԻ

ՏԱՎՈՒՇԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈԹՈՂՆԵՐԸ

ArmLur.am-ն ուսումնասիրել է Տավուշի շրջանի 4 գյուղերում (Ոսկեպար, Բաղանիս, Ոսկեւան, Կիրանց) գտնվող պատմամշակութային կոթողները եւ այդ կոթողների ունեցած պատմական ու մշակութային արժեքները:

Նշված 4 գյուղերը կորցնելով՝ Հայաստանը, հայկական տուրիզմը կկորցնի նաեւ մի շարք կոթողներ ու տեսարժան վայրեր: Տավուշ մարզի Բաղանիս գյուղում գտնվող մի շարք եկեղեցիներ, ամրոցներ, խաչքարեր ու հուշարձանները մեզ են հասել դեռեւս Ք.ա. 2-1 հազարամյակներից: Գյուղի տարածքում առկա բազմաթիվ պատմամշակութային հուշարձաններից 8-ը գրանցված են Հայաստանի Հանրապետության պատմամշակութային հուշարձանների ցանկում: Բաղանիս գյուղում է գտնվում համանուն անվամբ ամրոցը, որը կառուցվել է Ք.ա. 2-1 հազարամյակներում: «Բաղանիս» ամրոցը գտնվում է գյուղից 1 կմ հարավարեւմտյան հատվածում՝ Ոսկեպար տանող ճանապարհի ձախ եզրին՝ կլոր բլրի վրա: Այս նույն տեղանքում է գտնվում մ.թ.ա. 2-րդից 1-ին հազարամյակից մինչեւ ուշ միջնադարով թվագրվող բնակատեղին: Գյուղն ունի երկու եկեղեցի, որից միայն մեկն է այսօր կիսակառույց պահպանված: Մի եկեղեցին (անունը հայտնի չէ) գտնվել է գյուղի հարավային եզրին եւ կառուցվել է 12-13-րդ դարերում, այնուհետեւ վերակառուցվել է 19-20-րդ դարերում: Մյուս՝ Բաղանիսի Սուրբ Աստվածածին եկեղեցու կառուցումը թվագրվում է 4-5-րդ դարերում: Պահպանվել են խորանի մասը, հյուսիսային պատը (ողջ երկարությամբ՝ մինչեւ թաղածածկը), դրանց կից հարավային ու արեւմտյան պատերի սկզբնամասերը: Պատերի ստորին երեսաքարերը հիմնականում բացակայում են: Թաղակամարների եւ թաղակապ ծածկի հետքեր, ինչպես նաեւ տարածքում ավերված մասերի բեկորներ կամ քարեր չեն պահպանվել: Կառուցված է հիմնականում դեղնավուն ֆելզիտե սրբատաշ խոշոր (ստորին մասերում 60-65 սմ բարձրությամբ) քարերով: Վերջին երեք շարքերի քարերն իրենց կանաչավուն երանգով տարբերվում են մյուսներից: Մնացորդները աչքի են ընկնում քարի մշակման եւ շարվածքի բարձր մակարդակով, կրաշաղախե միջուկի բացառիկ ամրությամբ: Բաղանիսի Սուրբ Աստվածածին եկեղեցու տարածքում է գտնվում 19-20-րդ դարերից պահպանված գերեզմանատեղին, որտեղ հուղարկավորված են եկեղեցու, ուխտատեղիների կառուցողների ու վերակառուցողների գերեզմանաքարերը: Ջուջեւան-Բաղանիս ճանապարհի հարավային կողմում գտնվում են երկու խաչքարեր, որոնք թվագրվում են 12-13-րդ դարերից: Գյուղում 1965 թվականին կանգնեցվել է նաեւ հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածների հիշատակին: Գյուղի տարածքում կան նաեւ հանքային աղբյուրներ:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«ԲԻԷՍԹԻ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՍՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերն ըստ ներկայացված հերթականության՝

- Կոտայքի մարզ, համայնք Աբովյան ք., 2-րդ միկրոշրջան, 28 շենք, 13 հասցեում գտնվող 70,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 23150000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Էրեբունի, Ռոստովյան փողոց, 25 շենք, 13 հասցեում գտնվող 71,3 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 35640000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, Ստեփանավան ք., Դեսինի փողոց, 14/1 հասցեում գտնվող 122,06 ք.մ. Առեւտրի եւ սպասարկման ոլորտի օբյեկտ եւ 0,0077 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 32600000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Կենտրոն, Հանրապետության փողոց, 62 շենք, 36 հասցեում գտնվող 35,13 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 42070000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Սպիտակ ք., Փյունիկ թաղամաս, 18 հասցեում գտնվող 80.7 ք.մ. բնակելի տուն եւ 0.076 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 8300000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 08.04.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 16.05.2024թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «ԲԻԷՍԹԻ» ՍՊԸ-ի դրամարկղում աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով:Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԿԻՆՈ

«ՈՒԺ ԳՏԱ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁԱ ՆԿԱՐԱՀԱՆՄԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ»

Մարտի 20-ին Երեւանում կայացել է «Կատարյալ ապուշը» ֆիլմի ռեժիսորական, որին ներկա են եղել դերասանական կազմն ու աշխատակազմը, հայտնի հյուրեր: ArmLur.am լրատվականը ներկա է եղել ֆիլմի փակ ցուցադրությանն ու կարմիր գորգի արարողությանը, նկատել ռեժիսորայի հետաքրքիր պահերը:

«Ֆիլմը կատակերգություն է, որը նախատեսված է հանդիսատեսի լայն լսարանի համար, որպես այդպիսին, կարելի է անվանել ընտանեկան ֆիլմ, որը կարող են դիտել բոլորը», - այս մասին մարտի 20-ին՝ «Կատարյալ ապուշը» ֆիլմի փակ ցուցադրության ժամանակ, ասաց ֆիլմի ռեժիսոր, գլխավոր դերակատար Տիգրան Նալչաջյանը: Նրա մարմնավորած հերոսը Տիգրիսն է, որը խենթ կերպար է: Վերջինս որոշել է փոխել աշխարհը դեպի լավը եւ մարդկանց միջից հանել չարությունը, արդյուքում անընդհատ հայտնվում է տարատեսակ զվարճալի արկածների մեջ. «Բացի հանդիսատեսի համար հաճելի ժամանց ապահովելուց, ֆիլմը նպատակ ունի նաեւ բարություն եւ արժեքներ հաղորդել հասարակությանը: Դահլիճից դուրս եկող հանդիսատեսը վստահաբար բարի գործ անելու ցանկություն կունենա: Եվ եթե յուրաքանչյուրը կատարի թեկուզ մեկ, թեկուզ չնչին բարի գործ, աշխարհը ավելի լավը կդառնա»: Ռեժիսորի խոսքով՝ ֆիլմի նկարահանումները համընկել են իր կյանքի մեծագույն ողբերգության՝ քրոջ կորստի հետ. «Շատ լավ նկարահանումներ ունեինք մինչեւ այն պահը, երբ իմ կյանքում տեղի ունեցավ մեծ ողբերգություն՝ քրոջս մահը: Երկարատեւ դադարից հետո ես իմ մեջ ուժ գտա եւ վերադարձա նկարահանման հրապարակ, քանի որ մի մեծ թիմ ինձ էր սպասում: Եվ նրանք էլ, իրենց հերթին, արեցին ամեն ինչ, որպեսզի նկարահանումները հարթ ընթանան, եւ ունենանք այն ֆիլմը, որն արդեն կա: Բացի այդ, իմ կերպարն ունի նմանություն քրոջս՝ Նվարդի հետ, որը հայտնի է իր բացառիկ բարեգործություններով, եւ ես ոգեշնչվում էի հենց նրանով»: Նալչաջյանը հավելել է, որ քույրը ներկա է եղել ֆիլմի նկարահանման առաջին օրը: Ռեժիսորը հույս է հայտնել, որ հանդիսատեսը կսիրի ֆիլմը, ինչն էլ նրան կվերադարձնի նկարահանման հրապարակ: Ֆիլմի պրեմիերային ներկա «Փյունիկ» համահայկական հիմնադրամի նախագահ Գաբրիել Չեմբերջյանը, Հայաստանում Սիրիայի Հանրապետության դեսպան Նորա Արիսյանը եւ քաղաքագետ Թեւան Պողոսյանը: «Կատարյալ ապուշը» ֆիլմում նկարահանվել են Արման Ղազարյանը, Մելսիդա Հակոբյանը, Գեորգի Հովակիմյանը, Արթուր Հակոբյանը, Կրիստինա Հովակիմյանը, Նարեկ Մարտիրոսյանը, Սերգեյ Սարգսյանը, Սոֆյա Հովհաննիսյանը, Վահագն Գալստյանը, Հայկ Հովհաննիսյանը, Օֆելյա Հարությունյանը, Սեպուհ Ապիկյանը եւ այլք:

ՀՈՒՐԻ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի «Հակադոպինգային գործակալություն» ՊՈԱԿ-ն առաջին անգամ մասնակցել է Համաշխարհային հակադոպինգային գործակալության կոնգրեսին:

Լոզանում տեղի է ունեցել Համաշխարհային հակադոպինգային գործակալության (ՀՀԳ) ամենամյա գագաթնաժողովը, որին մասնակցել են նաեւ Հայաստանի «Հակադոպինգային գործակալություն» ՊՈԱԿ-ի տնօրեն Դավիթ Մոսինյանը, փոխտնօրեն Արեգ Հովհաննիսյանը, անգլերենի մասնագետ-իրավաբան Մերի Օհանյանը: Առաջին անգամ գագաթնաժողովին մասնակցել է ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության՝ բժշկական թմրադեղերի ապօրինի շրջանառության եւ տարածման դեմ պայքարի բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Արսեն Թադեւոսյանը:

Մասնակցությունը գագաթնաժողովին շատ կարեւոր է Ներքին գործերի նախարարության, «Հակադոպինգային գործակալություն» ՊՈԱԿ-ի եւ Համաշխարհային հակադոպինգային գործակալության հետագա համագործակցության համար:

ԹԱՆԿ ՖՈՒՏԲՈԼԻՍՏ

Հայաստանի ազգային հավաքականի եւ ռուսական «Կրասնոդարի» կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանը Transfermarkt-ի վարկածով ընթացիկ մրցաշրջանում ընդգրկվել է ՌՊԼ-ի ամենաթանկ ֆուտբոլիստների ցուցակում:

«Սպուտնիկ Արմենիա»-ի փոխացմամբ՝ Սպերցյանը Սանկտ Պետերբուրգի «Զենիթից» Կլաուդինոյի եւ նրա թիմակից Մատվեյ Սաֆոնովի հետ կիսում է 2-4-րդ տեղերը: Այս խաղացողներից յուրաքանչյուրն արժե 18 միլիոն եվրո:

Վարկանիշային աղյուսակի առաջին տեղը զբաղեցնում է «Զենիթի» մեկ այլ ֆուտբոլիստ՝ Վենդելը:

Ռուսաստանի Պրեմիեր լիգայի ընթացիկ մրցաշրջանում հայ կիսապաշտպանը անցկացրել է 19 հանդիպում, որոնցում դարձել է 8 գոլի եւ 4 գոլային փոխանցման հեղինակ:

Սպերցյանը Կրասնոդարի շրջանավարտ է: Ֆուտբոլիստը ծնվել է Ռուսաստանում, սակայն 2021 թվականի փետրվարին որոշել է հանդես գալ Հայաստանի ազգային հավաքականում: Կիսապաշտպանի պայմանագիրը «Կրասնոդարի» հետ ավարտվում է 2026 թվականին:

ՄՐՑԱՎԱՐՆԵՐԸ՝ ՎՐԱՑԻ

Հայաստան-Կոսովո հանդիպումը կսպասարկի վրացական մրցավարական անձնակազմը:

Հանդիպման մրցավար է նշանակվել Իրակլի Կվիրիկաշվիլին, մրցավարի օգնականներն են Դավիդ Չիգոգիձեն եւ Իրակլի Կակաբաձեն: Չորրորդ պաշտոնյան կլինի Զավեն Հովհաննիսյանը:

Հայաստան-Կոսովո հանդիպումը կկայանա մարտի 22-ին՝ ժամը 20:00-ին (Երեւանի ժամանակով):

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

«ԲԻԷՍԹԻ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը՝

- Կոտայքի մարզ, համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 18-րդ փողոց, 13-15 հասցեում գտնվող 1264,75 քմ բնակելի տուն, 337,63 քմ բնակելի տուն, 251,24 քմ բնակելի տուն, 9,9 քմ լվացարան, 4 քմ զուգարան, 8,1 քմ բաղնիք լվացատուն, 16,95 քմ ջրավազան, 8,73 քմ /26,19 խմ/ պարիսպ եւ 0,16 հա հողամաս: Առկա են 5,45 քմ ինքնակամ կառուցված շինություններ եւ 0,02001 հա ինքնակամ զբաղեցրած հողամաս: Բնակելի տան ավարտվածության աստիճանը 50-80%: Լոտի մեկնարկային գինը՝350000000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Աջափնյակ, Ռ. Մելիքյան փողոց, 76/1 հասցեում գտնվող 106,71 քմ արտաքին մակերեսներով ինքնակամ կառուցված շինություններ եւ 0,01861 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 18800000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 08.04.2024թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝01.07.2024թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բիէսթի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.com կայքեր:

●Մարտի 30-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Սիդը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ովքեր չեն կարող օգտվել սոցիալական փաթեթի ծառայություններից: Ո՞ր աշխատողները չունեն նման իրավունք:

Երանուհի Հայրապետյան (30 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Սոցիալական փաթեթը չի տարածվում տվյալ մարմնում սոցիալական փաթեթի շահառուի վերջին վեց ամսվանից պակաս աշխատանքային ստաժ ունեցող անձանց, կես դրույքից պակաս դրույք (նորմալ աշխատաժամանակի 50 տոկոսից պակաս աշխատաժամանակ) ունեցող անձանց, հղիության եւ ծննդաբերության, ինչպես նաեւ մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող նպատակային արձակուրդում գտնվող անձանց, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով բարձրաստիճան պաշտոնատար անձանց վրա՝ բացառությամբ հղիության եւ ծննդաբերության նպատակային արձակուրդից, մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող նպատակային արձակուրդից, կադրերի ռեզերվից, պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից վերադարձած անձանց: Թվարկված անձանց վերջին վեց ամսվա աշխատանքային ստաժը հաշվարկվում է առանց նշված ժամանակահատվածի: Զինծառայողների դեպքում մեկ զորամասից մեկ այլ զորամաս տեղափոխվելը չի դիտարկվում մեկ այլ մարմնի տեղափոխություն, սակայն այդպես է դիտարկվում հանրապետական գործադիր մարմնի փոփոխությունը (օրինակ՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կազմից Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կազմ տեղափոխվելը):

Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Յուրաքանչյուր աշխատակցի համար սոցիալական փաթեթով նախատեսված գումարը կազմում է 11 հազար դրամ: Սոցիալական փաթեթը ամսական գումար է, որը տարեկան կտրվածքով կազմում է 132,000 ՀՀ դրամ:

ՎՃԱՐՆԵՐ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ովքեր են համարվում ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճար վճարողներ:

Ջիվան Հակոբյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ջ. Հակոբյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճար վճարողներ են համարվում Հայաստանի Հանրապետություն ծխախոտի արտադրանք ներմուծող եւ հանրապետությունում ծխախոտի արտադրանք արտադրող ֆիզիկական եւ իրավաբանական անձինք: Ծխախոտի արտադրանք ներմուծող քաղաքացիները հաստատագրված վճար վճարող են համարվում 400 հատ սիգարետը կամ սիգարելան եւ 10 հատ սիգարը գերազանցող մասի համար:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարի ընդհանուր գումարի մեջ ավելացված արժեքի հարկի հաշվարկային մեծությունն ընդունվում է 15, իսկ մաքսատուրքի հաշվարկային մեծությունը՝ 8.5 տոկոս:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի շախմատի տղամարդկանց թիմի նախկին անդամ Լեւոն Արոնյանը դարձել է Ամերիկայի գավաթի խաղարկության հաղթող: Նա այժմ հանդես է գալիս ԱՄՆ դրոշի ներքո:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



	Շիրակ	- 2 + 1 + 3 + 7
	Կոտայքի լեռներ	0 - 2 + 2 + 5
	Կոտայքի նախալեռներ	+ 4 + 6 + 8 + 10
	Գեղարքունիք	0 - 3 + 2 + 5
	Լոռի	- 2 + 2 + 5 + 8
	Տավուշ	+ 3 + 6 + 7 + 10
	Արագածոտնի լեռներ	0 - 2 + 2 + 4
	Արագածոտնի նախալեռներ	+ 3 + 6 + 5 + 9

	Արարատ	+ 5 + 7 + 12 + 14
	Արմավիր	+ 4 + 6 + 12 + 13
	Վայոց ձորի լեռներ	0 - 2 + 2 + 6
	Վայոց ձորի նախալեռներ	+ 5 + 7 + 10 + 13
	Սյունիքի հովիտներ	+ 2 + 5 + 9 + 12
	Սյունիքի նախալեռներ	- 2 + 2 + 5 + 7
	ԼՂՀ	- 2 + 1 + 5 + 6
	Երեւան	+ 8 + 10 + 13 + 15

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **21.3.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*